

## **ՄԱՐԳ, ՈՐԻ ԿՅԱՆՔԸ ՆՎԻՐՈՒՄ ԷՐ Ալի Էրթենի հիշատակին\***



Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար մղվող պայքարը մեծ կորուստ կրեց. 2021 թ. դեկտեմբերի 2-ին՝ ծանր հիվանդությունից հետո, 71 տարեկան հասակում կյանքից հեռացավ Գերմանիայում բնակվող թուրք հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, մեծ մարդասեր և հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Ալի Էրթենը:

Ալի Էրթենը ծնվել է 1950 թ. Թուրքիայում՝ Անատոլիայի սուննի իսլամական Գյուլլու գյուղում՝ բազմազգավակ ընտանիքում: Իր ինքնակենսագրական հոդվածում նա վկայում է, որ մանուկ հասակում ավագ եղբոր

\* Ընդունվել է տպագրության 15.12.2021:

հետ ծնողներն իրեն ուղարկել են կրոնական դպրոց, որտեղ Ղուրան էր ուսուցանվում տեքստերն անգիր սովորել տալու միջոցով: Այնուհետև, քանի որ գյուղում այլ դպրոց չկար, Ալի Էրթեմը տարրական և միջնակարգ կրթությունը ստանում է հայրենի գյուղից 30 կմ հեռավորության վրա գտնվող մեկ այլ գյուղի դպրոցում, որտեղ ամուսնացած քույր ուներ: Դպրոցում, ինչպես նշում է Ալի Էրթեմը, սովորեցնում էին դառնալ «հպարտ թուրք» և լինել աշակերտ, «որը ցանկացած պահի պատրաստ պետք է լինի իր կյանքը թուրքականությանը նվիրելու»<sup>1</sup>: Այստեղ ամեն օր՝ առավոտյան, երբ ուսուցիչը գալիս և բարևում էր երեխաներին, վերջիններս պետք է կանգնած հետևյալ երդումը տային. «Ես թուրք եմ՝ շիտակ, ջանասեր: Իմ սկզբունքն է՝ ինձնից փոքրերին պաշտպանել, ինձնից ավագներին հարգել, իմ հայրենիքն ու իմ ազգը ավելի սիրել, քան ինձ: Իմ իդեալն է՝ բարձրանալ, առաջ գնալ: Իմ գոյությունը պետք է նվեր դառնա թուրք ազգի գոյությանը»<sup>2</sup>: Դա առհասարակ տեղի էր ունենում բոլոր դպրոցներում:

Դպրոցն ավարտելուց հետո Ալիի ծնողները նյութական ծանր դրության պատճառով ստիպված էին մերժել մեկ ուրիշ դպրոցում ուսումը շարունակելու նրա թախսանձագին խնդրանքները, իսկ այն գիշերօթիկները, որոնց նա դիմում էր, հրաժարվում էին առանց կաշառքի ընդունել: «Այդպիսով ես մանուկ հասակում տեսա, որ բացահայտ կաշառքները և խտրականությունը փաստացի իրողություն են»<sup>3</sup>, - գրում է նա: Ծանր հոգեվիճակում հայտնված Ալի Էրթեմը ելք գտնելու հույսով մեկնում է Անկարա: Այստեղ տեղեկանալով, որ գերմանական կառավարությունը տարբեր մասնագիտություններով թուրք աշխատողների է կամենում ընդունել, նա համապատասխան դիմում է տալիս, որն ընդունվում է, և այնուհետև մեկնում է Գերմանիա: Ուշագրավ է Ալի Էրթեմի վկայությունն այն մասին, որ խմբի մեկնելուց առաջ նրանց է այցելում մի պետական պաշտոնյա. «Նա մի կրքոտ ելույթ ունեցավ, - գրում է այդ մասին Ալի Էրթեմը, - «Իմ սիրելի՛ հայրենակիցներ»՝ այսպես սկսեց նա, այնպես էր խոսում, կարծես դիմում էր զինվորների, որոնք պատերազմ էին մեկնում՝ **մի սուրբ առաքելություն** իրականացնելու համար (ընդգծումը հեղինակինն է - Ա. Ը.), և ոչ թե աշակերտների ու բանվորների, որոնք ճանապարհ էին ընկնում Գերմանիա՝ սովորելու և աշխատելու: Նա իր խոսքն ավարտեց հետևյալ բառերով. «Կեցցե՛ն նրանք, ովքեր իրենց թուրք են համարում»: Բուռն ծափահարություններ որոտացին»<sup>4</sup>:

1 Տե՛ս **Ali Ertem**: Die Sprache, die die Berge trägt oder „Warum ich mich für den öffentlichen Kampf zur Anerkennung des Genozids entschieden habe“, in: Heide Rieck/Azat Ordughanyan (Hrsg.): Wurzeln in der Luft, Völkermord und Lebensuren, Bochum, 2021, էջ 175:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 176:

4 Նույն տեղում, էջ 177:

Գերմանիայում Ալի Էրթեմը ստանում է հանքագործ-էլեկտրիկի, իսկ կարճ ժամանակ անց Բոխումի տեխնոլոգիական համալսարանում՝ նաև էլեկտրոտեխնիկի մասնագիտություն: Մասնագիտական կրթությանը զուգահեռ՝ նա մասնակցում է նաև դասընթացների Բոխումի Ռուհրի համալսարանում: Այստեղ Ալի Էրթեմը հանդիպում է մի հայ ուսանողի, որը նրան պատմում է Հայոց ցեղասպանության մասին: Հայ ուսանողի հետ զրույցը ցնցում է Ալի Էրթեմին և նրա աշխարհայացքի ձևավորման ու գործունեության համար դառնում կանխորոշիչ: Դպրոցում նա, ինչպես ինքն է գրում, բոլորովին այլ բան էր սովորել: Կարդալով Յոհաննես Լեփսիուսի, Յակոբ Կյունցլերի, Վահագն Դադրյանի, Ֆրիտյոֆ Նանսենի և այլոց աշխատությունները, մեծաքանակ այլ գրականություն, կապ հաստատելով ցեղասպանագիտությամբ զբաղվող մասնագետների հետ՝ Ալի Էրթեմը հանգամանալից իրազեկվում է Հայոց ցեղասպանության մասին և համոզվում, որ «թուրքական կառավարական ու կրթական հաստատությունները պաշտոնապես ստում են»<sup>5</sup>:

Ալի Էրթեմն այնուհետև իր կյանքի և գործունեության նպատակն է դարձնում թուրքական ժխտողականության դեմ պայքարը: 1996 թ. ապրիլի 24-ին նա, երբ արդեն Ֆրանկֆուրտում էր բնակվում, մասնակցում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված մի միջոցառման, որին ներկա էին նաև ձախակողմյան հայացքներ ունեցող քաղաքական գործիչներ: Նա տեսնում է, թե վերջիններս ինչպես են «ցեղասպանության ժխտումը հրապարակայնորեն դատապարտելու փոխարեն» փորձում ցեղասպանության փաստը ծառայեցնել իրենց կուսակցական և գաղափարական շահերին: Դա մղում է նրան 1998 թ. սեպտեմբերին հիմնադրելու իր կազմակերպությունը՝ «Ցեղասպանության հակառակորդների միությունը», որը, համախմբելով թուրք ու քուրդ մտավորականների, բանվորների և տարբեր մասնագիտություններով մարդկանց, Ալի Էրթեմի գործունեության համար դառնում է կանխորոշիչ: Նրա ղեկավարությամբ հետևողական գործունեություն ծավալվեց ժխտողականության դեմ պայքարի և ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու հատուցման համար<sup>6</sup>:

Իհարկե, այսօր էլ կան փոքրաթիվ թուրք մտավորականներ, որոնք հետևողականորեն և վճռականորեն հանդես են գալիս Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, հայ ժողովրդին ցեղասպանության հետևանքով պատճառված վնասների հատուցման պահանջով: Ալի Էրթեմը, սակայն, միակն էր, որն պայքարն առավել արդյունավետ դարձնելու համար այն կազմակերպական լուրջ հիմքերի վրա էր դրել՝ հիմնելով «Ցեղասպանության հակառակորդների միությունը»: Նրա նախագահությամբ

5 Նույն տեղում, էջ 178-179:  
6 Տե՛ս նույն տեղում, էջ 178-182:

յամբ այդ կազմակերպությունը բուռն և բազմակողմանի գործունեություն ծավալեց միջազգային հանրության և մասնավորապես Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության և այլ ցեղասպանական գործողությունների ճանաչման ու դատապարտման համար: Այդ գործունեությունը, որն ուղեկցվում էր թուրքական ժխտողականության դեմ համառ ու վճռական պայքարով, տարիների ընթացքում արգասավորվեց բազմաթիվ և բազմազան միջոցառումներով ու նախաձեռնություններով, որոնց միայն թվարկումը կարող է մի սովոր հատոր կազմել. գիտաժողովներ և ճանաչված գիտնականների մասնակցությամբ հրապարակային քննարկումներ, ֆոտոցուցահանդեսներ, հիշատակի միջոցառումներ, ցեղասպանությանը նվիրված նոր գիտական աշխատությունների շնորհանդեսներ, ժխտողականության դեմ ուղղված բողոքի ակցիաներ, ստորագրահավաքներ, դիմումներ Թուրքիայի և այլ երկրների կառավարություններին ու խորհրդարաններին, միաժամանակ՝ ակտիվ դիրքորոշում քաղաքական զարգացումների շուրջ և համակողմանի աջակցություն ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ այլ կազմակերպությունների և անհատների նախաձեռնություններին: «Միությունը ջանքեր է գործադրում՝ հասարակայնությանը լուսավորելու, նրան կատարված և ժխտվող ցեղասպանական հանցագործությունների հանդեպ զգայուն դարձնելու համար», - նշված է կազմակերպության՝ 2017 թ. ապրիլի 20-ին հրապարակած հռչակագրում: Դրանում որպես «Ցեղասպանության հակառակորդների միության» նպատակներ մատնանշվում են նաև հետևյալ առաջնահերթությունները.

- «Նա նպատակ ունի Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների, առաջին հերթին 1915 թվականին հայերի հանդեպ իրականացված ցեղասպանությունը հանրային գիտակցությանը մատչելի դարձնելու և դատապարտելու: Երբ մենք ուսումնասիրում էինք մեր նորագույն պատմությունը, առձակատվեցինք հետևյալ իրողությանը. Թուրքիայի Հանրապետությունը երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» շարժման ցեղասպան-ոճրագործների հիմնադրած հանցավոր կազմակերպություն է: Այն կառուցված է ցեղասպանության զոհերի դիակների վրա: Թուրքիայի Հանրապետությունն այդպիսով բացարձակապես հակադիր է ընդհանուր արժեքներին, զորօրինակ՝ հումանիզմին, և չունի որևէ լեգիտիմություն: Քանի որ հայ ժողովրդի ցեղասպանության ժխտումը գիտակցաբար գործադրվող քաղաքականություն է, որը ծառայում է Թուրքիայի հասարակությանը հայ ժողովրդի դեմ գրգռելուն և միջազգային հանրությանը մոլորեցնելուն, այդ մասին վարվող պրոպագանդան ամբողջովին հիմնված է կեղծիքի և ժխտման վրա: Այդ պատճառով պետությունն իր տրամադրությամբ

յան տակ գտնվող բոլոր ինստիտուտներն ու միջոցներն օգտագործում է ցեղասպանությունը ժխտելու համար»:

- ««Ցեղասպանության հակառակորդների միությունը» իր հիմնադրման օրից ի վեր փորձել է ժխտողականության դեմ պայքարով նպաստել պատմության վերաբնությանը և վերարժևորմանը: Փորձը ցույց է տվել, որ պետական վարչակարգը, որը ժխտում է իր հանցագործությունները, հարկադրված է դիմել պարբերական ռասիստական պրոպագանդայի, մշտական ներհասարակական լարվածության ստեղծմանը, հասարակության լայն շերտերին դաժանության և բռնության ուղղորդելուն կամ հարևան պետությունների հետ հակամարտությունների առաջացմանը, որպեսզի կարողանա ապահովել իր հետագա գոյությունը: Հանրապետության պատմության ընթացքում տասնամյակների հակամարտությունները, ժողովրդավարության ահռելի պակասը, մարդու իրավունքների չդադարող ոտնահարումները և առանց այն էլ կրճատված ու հյուծված էթնիկ խմբերի հետապնդումները ցույց են տալիս, որ ցեղասպանությունների ժխտումը շարունակ հանգեցնում է մարդկության դեմ նոր հանցագործությունների»:

- «Այդ պատճառով «Ցեղասպանության հակառակորդների միությունը», 1998 թվականին իր հիմնադրումից սկսած, պահանջում է անհապաղ վերջ տալ ժխտման քաղաքականությանը և ձանաչել ցեղասպանությունները: Սեփական պատմության մութ էջերի ազնիվ և հրապարակային լուսաբանումը փոխհատուցումների և հատուցումների նախապայմանն է: Մենք պահանջում ենք ցեղասպանությունների անվերապահ ձանաչում և դրանից բխող բոլոր պարտականությունների կատարում: Պետական և հասարակական մեղքի և պատասխանատվության գիտակցումն ու ընդունումը կարող են օգնել մեղմելու ցեղասպանության զոհերի հետնորդների ցավը: Դա մեր տեսանկյունից նաև մի կարևոր քայլ և նախադրյալ է՝ Թուրքիայի հասարակությանը տևականորեն դեմոկրատացնելու համար: «Ցեղասպանության հակառակորդների միությունը» հանդգնված է, որ դեմոկրատական, փոխադարձ հարգանքի, այլ խմբերի գոյության իրավունքի ձանաչման վրա հիմնված հասարակություն այլ կերպ հնարավոր չէ ստեղծել»<sup>7</sup>:

Ալի Էրթեմն իր պարտքն էր համարում ամեն տարի՝ ապրիլին, իր կազմակերպությունը ներկայացնող մի պատվիրակությամբ գալ Հայաստան և իր խոնարհումն ու մեծարանքի տուրքը մատուցել ցեղասպանության զոհերի հի-

7 Փաստաթուղթը մեզ է տրամադրել «Ցեղասպանության հակառակորդների միության» վարչության անդամ, դոկտոր Էրան Գյունդուզը:

շատակին: 2019 թ. ապրիլին նա «Մենք հայտնելու ենք ճշմարտությունը մեր երեխաներին» կարգախոսով եկել էր 20 հոգուց բաղկացած մի պատվիրակության հետ, որոնցից 7-ը դեռահասներ և երեխաներ էին: Ֆրանկֆուրտ վերադառնալուց հետո, ամփոփելով իր այցի արդյունքները և ԵՊՀ-ում իր պատվիրակությանը ցուցաբերված հանդիսավոր ընդունելությունից ստացած տպավորությունները, նա իր ուղարկած շնորհակալագրերում հետևյալն էր գրում. ««Ցեղասպանության հակառակորդների միության» աշխատանքը տասնամյակներ ի վեր այն սկզբունքով է ղեկավարվում, որ միայն ճշմարտությունը կարող է լույս սփռել կեղծիքների վրա և նպաստել հաշտությանը: Այն, որ թուրքական պետությունը՝ որպես օսմանյան պետության իրավահաջորդ, անպայմանորեն պատասխանատվություն է կրում հայ ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանությունից բխող բոլոր պարտավորությունները կատարելու հարցում, մեզ համար ինքնին հասկանալի է:

Մեր աշխատանքը նպատակաուղղված է պետական ժխտողական քաղաքականության դեմ քաղաքացիա-հասարակական ճանաչման քաղաքականություն ձևավորելուն. մենք դրանով պարտական ենք մի կողմից ցեղասպանության գոհերին և նրանց ժառանգներին, նաև երբ մարդկային և մշակութային մեծ կորուստը չենք կարող հատուցել: Մյուս կողմից՝ մեր աշխատանքը այն սկզբունքով է ղեկավարվում, որ մի հասարակություն, որն իր պատմությունը չգիտի և չի լուսաբանում, նգովված և դատապարտված է ապրելու կեղծիքի և ժխտման մեջ: Նա ենթակա է խաբեությունների և չի կարող խիղճ ու կարեկցանք դրսևորել, այո՛, նա մշտապես ունակ է շարունակ նոր հալածանքներ, կոտորածներ և ցեղասպանություններ իրականացնելու: Այդ դեպքում ժողովրդավարությանն անունակությունը, այո՛, հակաժողովրդավարական զարգացումներին միտվածությունը կանխավ ծրագրորոշված են: Ըստ այդմ՝ մեր աշխատանքն ուղղված է նաև պատմական իրողությունների ճանաչման միջոցով Թուրքիայի արդի հասարակության ժողովրդավարացմանը նպաստելուն:

Մեր հույսն այն է, որ մի օր ավելի շատ թուրքեր և քրդեր իրենց ընտանիքների հետ միասին ճանապարհ կգտնեն դեպի հայ ժողովուրդը և կսգան ու իրենց ամոթը կարտահայտեն հայ ժողովրդին կորցնելու և Անատոլիայից նրա վերանալու առնչությամբ: Մեր հույսն այն է, որ այդ մարդկանց թիվը, չնայած անցնող ժամանակին, կմեծանա, այնպես որ նրանք հարաձուռն ճնշում կգործադրեն Թուրքիայի գալիք կառավարությունների վրա՝ անատոլիական հողի վրա իրականացված ցեղասպանություններն առանց «եթե»-ի և «սակայն»-ի ընդունելու համար: Որպես կազմակերպություն՝ մենք հայ ժողովրդի կողքին ենք լինելու նաև ա-

**պագայում և մեր բոլոր ջանքերը ներդնելու ենք նրա արդարացի պահանջները բավարարելու համար...»<sup>8</sup>:**

Ալի Էրթեմի անժամանակ մահը մեծ կորուստ է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հատուցման համար մղվող պայքարի և առհասարակ մարտնչող հումանիզմի համար, որի դասական ներկայացուցիչն էր նա: Ալի Էրթեմի մահով որբացան բազմաթիվ գաղափարներ և ծրագրեր, որոնք նա չհասցրեց իրականացնել: Մակայն, անկասկած, նրա ցանած սերմերը մշտապես պտղաբերելու են: «Ցեղասպանության հակառակորդների միությունը» ևս, որը նա հիմնադրել ու ղեկավարում էր, լի է վճռականությամբ՝ իր առաջնորդի մահից հետո շարունակելու այդ մեծ առաքելությունը:

**Աշոտ Ն. Հայրունի**  
*Պատմ. գիտ. դոկտոր*

**Աշոտ Ն. Հայրունի** – ունի 7 գիտական մենագրություն, որոնցից 3-ը՝ գերմաներեն, և շուրջ 200 գիտական հոդված, որոնց զգալի մասը լույս է տեսել Գերմանիայում գերմաներենով: Զբաղվում է Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտին, Հայաստանի Հանրապետությանը և հայգերմանական հարաբերություններին վերաբերող խնդիրներով:

Էլ. հասցե՝ hayruniashot@gmail.com

«Ցեղասպանության հակառակորդների միության»  
հայտարարությունը՝ Ալի Էրթեմի մահվան կապակցությամբ

**ՄԵՆՔ ՍԳՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՈՋ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ՝  
ԱԼԻ ԷՐԹԵՄԻ ՄԱՀԸ**

2021 թ. դեկտեմբերի 2-ի առավոտյան մենք ստացանք մեր սիրելի ընկերոջ՝ Ալի Էրթեմի մահվան բոթը: Որպես «Ցեղասպանության հակառակորդների միության» հիմնադիր և երկարամյա նախագահ՝ նա անմնացորդ նվիրվել էր Հայոց ցեղասպանության և Թուրքիայում իրագործված մյուս ցեղասպանությունների ճանաչման գործին:

Մենք սգում ենք Ալիի՝ մեր ընկերոջ և նախագահի մահը: Նրա բացակայությունը երբեք ոչ որ չի կարողանա լրացնել: Թե՛ որպես մարդ, թե՛ որպես քաղաքական գործիչ՝ Ալին մեզ համար մշտապես օրինակ է եղել իր խիզախությամբ, սրահայացությամբ, աներկբա և հստակ դիրքորոշումով և

<sup>8</sup> Քաղվածքն արվել է Ալի Էրթեմի 2019 թ. հունիսին ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտին ուղարկված նամակից:

համոզմունքներով, որոնց մեջ ցեղասպանության ճանաչման հարցում որևէ կոմպրոմիս չկար:

Ինչպես հայ, այնպես էլ ասորական-արամեական, Պոնտոսի հույն ու նաև քուրդ ժողովուրդները կորցրին մի թանկագին բարեկամի: Թուրքիայում կատարված ցեղասպանությունների ճանաչման և դատապարտման համար պայքարողները կորցրին իրենց ամենահամոզված և ամենավճռական գինակցին: Ալին մեր միության գլուխը և շարժիչ ուժն էր: Ալին նորարար էր, համոզված հեղափոխական, որը ոչ միայն խոսքով էր պայքարում, այլև այն վերածում էր կոնկրետ գործի: Նրա նվիրումը և հստակ դիրքորոշումը այսուհետ ևս որպես փարոս կլուսավորեն մեր անցնելիք ուղին և մեր անելիքները Թուրքիայի կողմից ցեղասպանությունների ժխտման խավարում:

Ալի՛, Դու չափազանց վաղ և անսպասելիորեն հեռացար մեզանից, մենք սգում ենք Քո մահը: Մենք, սակայն, գիտենք նաև, որ Քո գործունեության պտուղները մշտապես կարգասավորվեն, սիրելի՛ ընկեր և զինակից: Քո բացակայությունը երբեք չի կարող լրացվել:

**«Ցեղասպանության հակառակորդների միություն»**

Ֆրանկֆուրտ  
02-ը դեկտեմբերի, 2021 թ.

Ալի Էրթեմի զեկույցի տեքստը՝ Արցախյան 44-օրյա պատերազմի օրերին՝ 2020 թ. նոյեմբերի 8-ին, Երևանի պետական համալսարանի կազմակերպած՝ **«ԱԴԻԲԵՋԱՆԱ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ԵՎ ԱՐՅԱԽԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»** միջազգային գիտաժողովում (տպագրվում է առաջին անգամ)

**ԱԼԻ ԷՐԹԵՄ**

**Ցեղասպանության հակառակորդների միություն  
Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիա**

**ԱՐՅԱԽԻ ԴԵՄ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՋՆՁՄԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
ՈՐՊԵՍ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Դադարեցրե՛ք հայ ժողովրդի 2-րդ ցեղասպանությունը:  
Արցախի Հանրապետության ճանաչում:**



Բարև՛:

Բարի օր բոլորին: Մրտանց շնորհակալ եմ գիտաժողովի ղեկավարներին՝ հրավերի համար:

Նախքան զեկուցումս սկսելը խորին ակնածանքով և ոգեկոչմամբ խոնարհվում եմ հայ ժողովրդի նահատակների առջև, ովքեր իրենց կյանքն են զոհել Ադրբեջանի և նրա հանցակից Թուրքիայի նենգ ու ցեղասպան ծրագիրը կանխարգելելու և իրենց հայրենիքը պաշտպանելու համար: Ես ողջունում եմ Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության քաջարի զինված ուժերին, որոնք պաշտպանում են իրենց հայրենիքը ֆաշիստական հարձակումից, պաշտպանում են իրենց քաղաքացիներին, անձնուրաց դիմադրություն են ցույց տվել և հերոսաբար դիմակայել են:

Ողջունում եմ նաև Ադրբեջանի այն մարդկանց և ընդդիմադիր ուժերին, որոնք ծանրագույն պայմաններում ցանկացած եղանակով բացահայտ կամ ոչ բացահայտ դիմադրություն են ցուցաբերում ֆաշիստական օլիգարխներին և նրանց թուրք հանցակիցներին ու նրանց մարդասպան և անիմաստ պատերազմին՝ այդ կերպ հակամարտության խաղաղ լուծմանը նպաստելու կամ դրա օգտին արտահայտվելու համար: Ես կիսում եմ ադրբեջանցի այն ծնողների ցավը, որոնք կորցրել են իրենց կամքին հակառակ պետական տեռորով և հարկադրանքով մարտադաշտ քշված իրենց զավակներին: Ես նրանց իմ խորին ցավակցությունն եմ հայտնում:

Կցանկանայի զեկուցումս սկսել՝ անդրադառնալով Առաջին աշխարհամարտի ժամանակ օսմանյան կամ թուրքական զինված ուժերի բարձրագույն հրամանատարության մի դավադրությանը, որի նպատակն էր մեկուսացնել, զրպարտել, նսեմացնել և ի վերջո բնաջնջել հայ ժողովրդին: Այն, բացի այդ, նաև նպատակ ուներ քողարկելու կառավարման ողջ համակարգի անկարողությունը և նրա կողմից մարդկային քաղաքակրթության անհիմաստ ոչնչացումն ու նրա ցեղասպանական հանցագործությունը: Թուրքիայի կառավարության այդ դավադիր ծրագիրը համաշխարհային պատմության մեջ մտավ որպես տխրահռչակ «դաշունահարվածի լեգենդ»: Այդ լեգենդը հետևյալն է ասում. «Եթե հայերը չդավաճանեին թուրք ազգին և նրան **թիկունքից դաշույնով չհարվածեին**, ապա օսմանյան պետությունը և նրա դաշնակիցները կհաղթեին Առաջին համաշխարհային պատերազմում ու մի փառավոր տերություն կստեղծեին Ադրիատիկ ծովից մինչև Չինական պատը»:

Օսմանյան կայսրության ծայրամասային շրջանների աստիճանական փլուզումից, հատկապես Բալկաններում բազմակորուստ պարտությունից հետո օսմանյան պետության կառավարման մեջ տեղի ունեցավ ռազմավարական մի հիմնարար փոփոխություն: **Այդ հիմնարար փոփոխությունն**

**արմատապես մերժում էր բազմազգ ազգային պետականությունը:** Այդ իսկ պատճառով նպատակ դրվեց ձևավորելու սուննիական-իսլամական հավատը դավանող «միատարր» թուրքական ազգ, քրիստոնյա-տեղաբնիկ ժողովուրդներին բացառելու ու վտարելու, հարկադրաբար իսլամացնելու կամ միաձուլելու ոչ թուրք մուսուլմաններին թուրքական տիրապետության ներքո, ինչպես նաև տերության սահմաններն ընդլայնելու դեպի արևելք՝ նախ և առաջ միանալով Ադրբեջանի հետ:

Դա դիրքավորվելու և Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու վճռորոշ պատճառն էր: Այդ արկածախնդրությունների առաջին փորձը կատարեց օսմանյան բանակի շտաբի պետի նախկին տեղակալը՝ Էնվեր փաշան: Իր գլխավոր հրամանատար Լիման ֆոն Սանդերսի ենթադրյալ հավանությամբ՝ Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո Էնվեր փաշան իր ամբողջ 3-րդ բանակը՝ բաղկացած 90.000 հոգուց, առանց անհրաժեշտ ձմեռային սպառազինության, գրեթե առանց նյութատեխնիկական ապահովման, Սարիղամիշից անխղճաբար քշեց ձնամրրիկի մեջ: Դեկտեմբերի 22-ից հունվարի 15-ը, առանց որևէ թշնամու հանդիպելու, նա թողեց, որ ամբողջ 3-րդ բանակի գրեթե բոլոր անդամները ցրտահարվեն: Նա փորձեց իր իրականացրած զանգվածային սպանդի համար մեղադրել հայերին: Մեղավոր էին «հայ պարտիզանները», որոնք օգնել էին ռուսներին և թիկունքից «դաշունահարված» հասցրել օսմանյան բանակին:

Թուրքական կառավարությունն այդ հնարված զրպարտությունը դարձրեց պատրվակ՝ մի ամբողջ ազգի, այսինքն՝ հայերին, իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, և ամբողջ պետության մեջ ոչնչացնելու, Արևելյան Հայաստանը բռնակցելու, ինչպես նաև օսմանյան պետությունը Ադրբեջանի հետ միավորելու համար: 105 տարի ի վեր նա երդվել է վրեժ լուծել և փնտրում է մոտակա նպաստավոր առիթը՝ իր՝ ձնամրրիկի մեջ ավարտված երազանքը վերակենդանացնելու, այն է՝ **«երկու պետություններում գտնվող ազգը» մեկ պետության մեջ միավորելու, Հայաստանն ամբողջովին քարտեզից դուրս դնելու և ողջ հայ ազգին ոչնչացնելու համար:** Արդուլ Համիդ II-ի դարաշրջանում տեղի ունեցած կոտորածները, Ադանայում տեղի ունեցած զանգվածային ջարդերը և 1915-1923 թթ. ցեղասպանությունը, ինչպես նաև յուրաքանչյուր նոր հարձակում ավարտվում էր հայերի կյանքի և հայկական տարածքի նորանոր կորուստներով: Մի տեղաբնիկ ժողովուրդ, հազարամյակներ ի վեր իր հայրենիքում ապրած և քաղաքակիրթ մի ազգ մարդկության աչքերի առջև ուղղակիորեն սպանվեց հետամնաց և միջնադարյան բարբարոսների կողմից: **Պատերազմից հետո հանցագործներին պատասխանատվության ենթարկե-**

**լու՝ մեծ տերությունների խոստումը, պարզվեց, ոչ այլ ինչ է, քան խաբեություն:**

**Հոկտեմբերյան հեղափոխության** միջոցով աշխարհի պառակտումը ցեղասպան հանցագործների համար ստեղծեց լավագույն պայմանները, երբ նրանք իրենց ծառայություններն առաջարկեցին ինչպես **կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական** ճամբարին և հակասություններն առավելագույնս օգտագործեցին իրենց համար: Նրանք ձիշտ պահին շանտաժով և սպառնալիքներով, շողոքոքություններով և զիջումներով ինչպես կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական ճամբարում նոր պայմաններին հարմարվելու և Սևրի միջազգային պայմանագրի իրագործումը կանխելու, ինչպես և այն մեկ այլ պայմանագրով, այն է՝ Լոզանի պայմանագրով փոխարինելու վարպետներ էին: Նրանց նույնիսկ հաջողվեց բռնի կերպով արգելել տեղահանված հայերի, հույների և քրիստոնյա ասորիների վերադարձն իրենց հայրենիք և ցեղասպանությունից հետո գոհերի էթնիկական «գտումը» և կողոպուտը միջազգային հանրությանը պրոպագանդել որպես «հերոսական ազատագրական պայքար»:

**Հայերի ցեղասպանությունը, սակայն, մնաց անպատիժ: Մարդկային քաղաքակրթությունը հայերին թողել է բախտի քմահաճույքին:** Բացի ոչ բարձրաստիճան մի քանի հանցագործներից, որոնք Ստամբուլի ռազմական դատարանի վճռով կախաղան հանվեցին, գրեթե ողջ թուրքական ղեկավար էլիտան, որն իր դաշնակիցների հավանությամբ ու աջակցությամբ կազմակերպել և իրականացրել էր հայերի ու քրիստոնյա մյուս ժողովուրդների (հույների, այսինքն՝ Պոնտոսի հույների, ասորի արամեացիների) ցեղասպանությունը, մնաց անպատիժ: Լոզանում միջազգային հանրությունը սեղմեց արյունով շաղախված ձեռքերը, թափահարեց, նրանց «նորաստեղծ» **ցեղասպան պետությունը** (Թուրքիայի Հանրապետություն) բեռնաթափեց և համաշխարհային հանրությանը ներկայացրեց որպես «ժամանակակից Թուրքիա»:

**Դա միջազգային հանրության, հատկապես մեծ տերությունների՝ գլխավորությամբ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի, ամենաձակատագրական սխալն էր:** Նրանք, ովքեր ցեղասպանությունից տուժած ժողովուրդներին և, ընդհանուր առմամբ, մարդկությանը դժբախտություն են փոխանցել, կարողացան շուտով հաստատել, որ կլինեն ընդօրինակողներ: Նացիստական կուսակցության պարագլուխ Ադոլֆ Հիտլերը և նրա ընկերները թուրքական ցեղասպանական հանցագործություններով հիացողներն էին: Իր տխրահռչակ արտահայտությամբ՝ «Ո՛վ է հիմա խոսում հայերի բնաջնջման մասին», նա դա դարձրեց օրինակ իր հետագա հանցագործությունների համար: Չպատժված ցեղասպանությունը մոտ 20 տարի անց բուժմերանգի պես վերադարձավ մարդկությանը որպես **ՆԱՅԻՍ-**

**ՏԱԿԱՆ ԲԱՐՔԱՐՈՍՈՒԹՅՈՒՆ և Հոլոքոստ** ու սովերեց մարդկության դեմ կատարված բոլոր նախկին հանցագործությունները, որոնք մարդկությունը երբևէ տեսել էր:

Հոլոքոստն այն աստիճան ցնցեց մարդկությանը, որ հասարակական ճնշումը երկբևեռ (կապիտալիստական և սոցիալիստական) աշխարհին հարկադրեց միավորվել հակահիտլերյան կոալիցիայում ընդդեմ նացիստների: Հիտլերյան Գերմանիան ջախջախվեց, բայց նրա կուռքը և հանցակիցը (թուրքական պետությունը) խնայվեց: Վերջինս ոչ միայն շարունակեց վայելել անպատժելիությունը, այլև դա օգտագործեց որպես կրկնակ հանցագործ հետագա հանցագործություններ կատարելու համար: Ցեղասպան իշխանությունը կարողանում էր գոյատևել միայն հետագա հանցագործություններով, ինչպես, օրինակ, հակաքրիստոնեական, հակահրեական, հակաքրդական և հակաալևիական կոտորածներով, ընդհուպ Դերսիմի ցեղասպանությամբ, նվաճողական պատերազմներով և հարևան երկրների, գործարանակ՝ Կիպրոսի, Սիրիայի կամ Իրաքի տարածքների անեքսիայով: Կարճ ասած՝ նա կարողացավ իր գոյությունը պահպանել միայն մարդկության դեմ նոր հանցագործությունների միջոցով: 1915 թվականից առ այսօր նրա պատմությունն ուղեկցվում է նորանոր արյունահեղություններով:

Ցեղասպանության ժխտումն այն կատարած հանցագործի համար ունի մեկ նշանակություն. չկա ո՛չ իշխանության ավանդույթի խախտում, ո՛չ էլ գղջում գործած հանցանքի համար: Ամեն բան խոսում է այն մասին, որ հանցագործը վերածվել է ավանդական, այլ կերպ ասած՝ բազմակի հանցագործի: Անպատժելիությունը նրան հնարավորություն է ընձեռում անարգել շարունակելու իր հանցագործությունները: Նա շարունակ վերադառնում է հանցանքի վայր՝ ջնջելու իր հանցանքի հետքերը և նախապատրաստվելու իր հաջորդ հանցագործությանը, ինչպես նաև առաջին իսկ առիթի դեպքում հարվածելու: Այդ պատճառով և ցեղասպանության ժխտումը ոչ այլ ինչ է, քան դրա շարունակումը: Զոհերի՝ անդադար և ատելությամբ լի նվաստացումը, ձշմարտության ամենօրյա խեղաթյուրումն ու պատմության մշտական կեղծումը կրթության բոլոր ոլորտներում նույնպես ծառայում են նույն նպատակին: Ինչի՞ն է հանգեցնում այս ամենը: **Ողջ զարգացման օբյեկտիվ իրողությունները վկայում են, որ թուրքական իշխող էլիտան ոչ միայն անցյալում, այլև ներկայում մեղավոր է հայ ժողովրդի առջև:** Մեր ամենահրատապ և հույժ կարևոր ցանկությունն է համաշխարհային հանրության ուշադրությունը բևեռել լուրջ վտանգի վրա:

Տարիներ շարունակ մենք փորձում ենք հասկանալ արցախյան հակամարտության բոլոր ասպեկտները: Նվաճողները գալիս և գնում են, բայց հայ ժողովուրդը հազարամյակներ ի վեր շարունակում է ապրել և կառուցել իր քաղաքակրթությունը իր հայրենիքում՝ Հայաստանում/Արցախում:

Խորհրդային Միության շրջանում թույլ տրված անարդարությունը նույնպես չկարողացավ փոխել հայ ժողովրդի բնականոն զարգացումն ու կանքը: Ադրբեջանի՝ 70 տարվա բռնապետությունը չկարողացավ փոխել ո՛չ պատմական եղելությունը և ո՛չ էլ ժողովրդի նկարագիրը: Եվ դա տևեց այնքան ժամանակ, մինչև լուծարվեց Խորհրդային Միությունը, և խորհրդային դարաշրջանն ավարտվեց: Հայ ժողովուրդն օգտվեց իր իրավունքից և անձամբ որոշեց իր ճակատագիրը:

Մենք մեծ մտահոգությամբ ենք հետևում տարածաշրջանում վերջին տարիներին և ամիսներին ընթացող զարգացումներին: Տասնամյակներ շարունակ հայ ազգի դեմ ստեղծվում էր մի հանցավոր դաշինք: Նորն այդ դաշինքում այն է, որ Թուրքիայի նախաձեռնությամբ պատերազմի մեջ են ներգրավվել միջազգային ջիհադիստական ահաբեկչական խմբավորումները: Այդ պատճառով հայ ժողովրդի դեմ հարձակողական պատերազմն ունի նաև ջիհադիստական բնույթ: Ամեն ինչ պտտվում է հայ ազգի և նրա հայրենիքի շուրջ: 105 տարվա հանցավոր պլանը չի փոխվել: Ինչպես արդեն նշվել է, այդ պլանը նախատեսում է Հայաստանն ամբողջովին ամառացնել ու զավթել: Արցախի դեմ հարձակողական և բնաջնջման պատերազմը, ըստ էության, պլանի մի մասն է միայն: Եթե նրանց հաջողվի Արցախը զավթել, ապա նրանք կփորձեն զավթել ամբողջ Հայաստանը: Ադրբեջանի ֆաշիստական օլիգարխիան խելագարության հասնող ռևանշիստական մտասևեռմամբ սպառազինվում էր հայ ժողովրդի դեմ: Թուրքիան տարիներ շարունակ բոլոր միջոցներով փորձում է Ադրբեջանին հրահրել Հայաստանի դեմ, Ադրբեջանն արդիականացնել և նախապատրաստել հարձակողական պատերազմը. նա ոչ միայն խորհրդական էր ու օգնական, այլև աջակցում էր Ադրբեջանին նյութատեխնիկական առումով և, որպես միջնորդ, միջազգային ասպարեզում: 1994 թվականից ադրբեջանական ազգայնամուլները համագործակցում են Թուրքիայի հետ՝ ինչպես հայերի ցեղասպանության միջազգային ժխտման, այնպես էլ Արցախի Հանրապետության դեմ այսօրվա հարձակողական պատերազմի նախապատրաստման և իրականացման համար: Այդ փաստի առնչությամբ մենք կրկին ականատես ենք եղել, թե ինչպես 20-րդ, սակայն նաև 21-րդ դարում հայ ժողովուրդը, չնայած ցեղասպանության լուրջ վտանգին, մարդկային քաղաքակրթության կողմից թողնվել է բախտի քմահաճույքին: Հայ ժողովուրդը, չնայած ուժերի՝ իր համար աննպաստ հարաբերակցությանը, հերոսական դիմադրություն է ցուցաբերել հանցավոր դաշինքի դեմ: 3 միլիոն հայեր պայքարել են 80 միլիոն բնակչությամբ Թուրքիայի, 10 միլիոն բնակչությամբ Ադրբեջանի և միջազգային ահաբեկչական խմբավորումների դեմ: Արցախի Հանրապետության խիզախ ինքնապաշտպանական ուժերը պաշտպանել են իրենց ժողովրդին և երկիրը ռազմական ամենաարդիա-

կան տեխնոլոգիաների դեմ: Արցախն իր ազատության համար վճարել է իր անգին որդիների և դուստրերի թանկագին կյանքերով: Հայ ժողովուրդն իր արիությունն ու ուժը վերցնում է արդարությունից: Նա պաշտպանում է մարդկային արժանապատվությունը: Սա ոչ միայն պատերազմ է հայ ժողովրդի դեմ, այլ նաև բարբարոսության պատերազմ մարդկայնության դեմ: Եթե հայ ժողովուրդը պարտվի պատերազմում, մարդկությունը կկորցնի իր մարդկային արժանապատվությունը և կապիտուլյացիայի կենթարկվի բարբարոսության առջև, ինչը կարող է եզրափակվել մի 2-րդ ցեղասպանությամբ: Այդ պատճառով կոչ եմ անում հասարակայնությանը՝

Դադարեցրե՛ք թուրք-ադրբեջանական բարբարոսությունը հայ ժողովրդի դեմ:

Դադարեցրե՛ք հայ ժողովրդի դեմ իրականացվող 2-րդ ցեղասպանությունը:

Արցախի Հանրապետության անհապաղ ձանաչում:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Կեցցե՛ Հայաստանը:

Summary

## A MAN WHOSE LIFE WAS A DEDICATION

In memory of Ali Ertem

Ashot N. Hayruni

*Doctor of Sciences in History*

On December 2, 2021, **Ali Ertem**, a Turkish human rights advocate, publicist, political figure and a sincere friend of the Armenian people, after a battle with deadly illness, passed away. On September 26, 1998, in the German city of Mainz Frankfurt, Ertem established “The Association of People Opposed to Genocide”, a civic organization, which under his leadership included leading Turkish and Kurdish intellectuals and played an active and multifaceted role throughout the international community, most notably bringing public attention to the problem of recognizing and condemning the Republic of Turkey for its role in the Armenian, as well as other genocides. This activity, which was accompanied by a persistent and resolute struggle against Turkish denial, has borne fruit over the years through numerous and varied events and initiatives: conferences and public debates with renowned scholars, photo exhibitions, various commemorative events, presentations of new scientific works on genocide, public protests against denial, petitions, appeals to governments and parliaments of Turkey and other countries, at

the same time, showing an active position on new political developments and comprehensive support for initiatives by other organizations and individuals to recognize and condemn the genocide.

Ali Ertem's untimely death caused a great loss to the fighting humanism, of which he was the classic representative. His death orphaned many ideas and programs, which he did not manage to implement. There is no doubt, however, that Ali Ertem's work will live on; the seeds he sowed will always bear fruit. "The Association of People Opposed to Genocide", which he founded and led, is full of determination to continue its great mission after the death of its leader.

The article also presents the statement issued by "The Association of People Opposed to Genocide" on the occasion of the death of Ali Ertem, as well as the text of his report to the international conference entitled "Azeri-Turkish Aggression and Artsakh's Struggle for Independence" organized by YSU on November 8, 2020.

## Резюме

### ЧЕЛОВЕК, ЖИЗНЬ КОТОРОГО БЫЛА ПОСВЯЩЕНИЕМ

В память об Али Эртеме

Ашот Н. Айруни

*Доктор ист. наук*

Сообщество по борьбе за признание и осуждение Геноцида армян понесло большую потерю: 2-ого декабря 2021 г. после тяжелой болезни из жизни ушел турецкий общественный и политический деятель, публицист, великий гуманист и искренний друг армянского народа **Али Эртем**. 26 сентября 1998 г. в Германии, в городе Франкфурт-на-Майне он основал общественную организацию «Союз противников геноцида», которая под его руководством объединила в своих рядах представителей турецкой и курдской интеллигенции, проводила активную и многостороннюю работу в деле признания международным сообществом, и в частности Турцией, Геноцида армян и других геноцидальных действий.

Эта деятельность, которая сопровождалась упорной и решительной борьбой против турецкого отрицания Геноцида, проявлялась в многочисленных мероприятиях и инициативах: конференции, публичные обсуждения с участием известных ученых, фотовыставки, различные мемориальные мероприятия, презентации посвященных теме геноцида новых научных трудов, общественные акции протеста против отрицания, петиции, заявления правительству Турции и правительствам и парламентам других стран, одновременно с этим проявление активной политической позиции по вопросам новой

интерпретации событий и всесторонняя поддержка инициатив других организаций и индивидов, направленных на признание и осуждение Геноцида.

Безвременная смерть Али Эртема стала большой потерей для борцов за идеи гуманизма, классическим представителем которого он и был. Его смерть нанесла большой урон осуществлению многочисленных идей и проектов, которые он не успел воплотить в жизнь. Несомненно, дело Али Эртема будет жить, и посеянные им семена всегда будут приносить плоды. Члены «Союза противников геноцида», который он основал и которым руководил, полны решимости – продолжать выполнять свою великую миссию.

В статье представлены заявление «Союза противников геноцида», касающееся смерти Али Эртема, а также публикуемый впервые текст его доклада на состоявшейся 8 ноября 2020 г. в Ереванском государственном университете международной конференции «Азербайджано-турецкая агрессия и борьба Арцаха за независимость».